



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

_____ N _____

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ 1024-ՐԴ ԱՍՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ ծաղկածորցիներ,

Շնորհավորում եմ բոլորիս կողմից սիրված կանաչ քաղաքի 1024-րդ տարեդարձի առթիվ:

Շնորհիվ իր մեղմ կլիմայի, չքնաղ բնության ու անսահման հյուրընկալության, Ծաղկածորը հասցրել է դառնալ սիրված քաղաք ոչ միայն հայաստանցիների, այլև՝ օտարերկրյա հյուրերի համար: Ծաղկածորն իսկական դրախտավայր է ամռան տապից պաշտպանվելու համար ու ադրենալինի անսպառ աղբյուր՝ ձմեռային սպորտաձևերի սիրահարների համար:

Մակայն, մեր պարտքն է այնպես անել, որ մեր սիրելի քաղաքը պահանջված լինի տարվա բոլոր եղանակներին, դրա համար կան անհրաժեշտ նախադրյալները: Ուստի, ես մեկ անգամ շնորհավորելով՝ կոչ եմ անում աշխատել այս ուղղությամբ ու տեսլականներ մշակել Ծաղկածորի գրավչությունը նաև տարվա մյուս եղանակներին կրկնապատկելու համար:

Շնորհավո՛ր տոնդ, Ծաղկածոր: